Եւ իրաւ, քանի վեր էինք բարձրանում դէպի լեռան զառիվերը, գիշերային հովութիւնը այնքան զգալի էր դառնում: Մեր փոքրիկ քարաւանը առաջ էր գնում ամենայն եռանդով: Ձիերը այն աստիճան սովորած էին լեռնային անցքերին, որոնց միջով վայրենի այծերը դժուարութեամբ կարող էին անց կենալ: Մեր ճանապարհն ընկած էր նեղ կիրճերի միջով, ուր անհաւասար, ալիքաւոր դարուփոսերի եւ սարսափելի ելեւէջների պատճառով, երբեմն ստիպուած էինք ցած իջնել ձիերից: Այդ սաստիկ յոգնեցրեց ինձ: Բայց Սագօն յոգնութիւն չէր զգում. կարծես, ժայռերը, ապառաժներն իրանց սոսկալի պտոյտներով աւելի ոգեւորում էին նրան: Կարօն եւ Ասլանը գնում էին մեզանից քանի քայլ առաջ: Նրանք ինչ-որ բանի մասին տաք-տաք խօսում էին: Քամին, որ սկսեց փլել բարձրաւանդակների վրայ, չէր թողնում, որ նրանց ձայնը լսելի լինէր: Սագօն խօսում էր ինձ հետ, առանց լռելու, զանազան խառն եւ անկապ առարկաների վրայ: Բայց որքան ես աշխատեցի նրանից որեւիցէ տեղեկութիւն դուրս քաշել իրանց անցեալ կեանքի մասին, օտար երկրներում, — նա մնաց միշտ զգոյշ եւ ոչինչ չհաղորդեց ինձ:

Բայց որքա՜ն դիւթական ազդեցութիւն ունի լեռը, այն եւս հայկական ահաւոր, սքանչելի լեռը: Այդ ազդեցութեան ոգեւորութիւնը ես իսկոյն նկատեցի Սագօյի մէջ, երբ նա սկսեց իր գեղեցիկ ձայնով եղանակել մի փոքրիկ երգ:

ԺԵ. ՈՐՍՈՐԴԻ ՏՆԱԿԸ

Գիշերը մօտենում էր իր վախճանին, երբ հասանք Կ... գիւղը, որ գտնւում էր Դուշմանայ լեռների մէջ: Անդադար յարձակումները այդ լեռներից Սալմաստ գաւառի վրայ՝ առիթ էր աւել տեղացիներին այսպէս կոչել նրանց: Դուշմանայ լեռներ նշանակում է թշնամու լեռներ:

Գիւղից դուրս, բլուրի վրայ, միայնակ կանգնած էր փոքրիկ տնակ, որի պատուհաններից մէկը այն ուշ գիշերային պահուն լուսաւորած էր մռայլ լուսով: Աղօտ լոյսը քաշեց մեր քարաւանը դէպի իր կողմը: Մենք կանգնեցանք մի քանի քայլ հեռու, միայն Կարօն մօտեցաւ տնակին: Չգիտեմ նա ի՞նչ խօսեց, ի՞նչ ասաց, միայն այն տեսայ, քանի որպէից յետոյ բակի դռները բացուեցան, շեմքի վրայ յայտնուեցաւ մի ահագին կերպարանք ճրագը ձեռին: Որքան եւ նսեմացած լինէր իմ յիշողութիւնը, դարձեալ ես այն կերպարանքի մէջ ճանաչեցի որսորդ Աւօյին:

Կարօն նշան արեց իր ընկերներին, բոլորը մօտեցան: Մեր առաջին հոգսը եղաւ հանգստացնել ձիաները: Ախոռատան քնաթաթախ սպասաւո-